

# ՄԵՆՔ ԴԵՍՊԱՆՆԵՐ ԵՆՔ

Ի՞նչ է Նշանակում Հիսուսին Հետևել

Մաս 2

«Արդ Քրիստոսի կողմից պատգամավորություն ենք անում.»

Բ Կորնթացիս 5:20

## Իմ Դերը Որպես Դեսպան

### 1- Ես Հիսուսի ներկայացուցիչն եմ

«Միայն թե Քրիստոսի ավետարանին վայելող կերպով գնացեք.» Փիլ1:27

«Այնպես գնաք ինչպես որ կվայելի այն կոչումին որի մեջ կանչվեցաք:»

Եփեսացիս 4:1

### 2- Ինձ հանձնարարված է առաքելություն

«Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ պատվական չեմ համարում՝ որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը, և այն պաշտոնը որ Տեր Հիսուսից առա, որ Աստծո շնորհած ավետարանին վկայեմ:»

Գործք Առաքելոց 20:24

### 3- Ինձ խոսելու իշխանություն է տրված

«Հիսուսը ասեց, Ամեն իշխանությունն ինձ տրվեցավ երկնքումն և երկրումն. ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նրանց մկրտելով շոր և Որդու և Մուրբ Հոգու անունովը. Նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատվիրեցի պահեն. և ահա ես ձեզ հետ եմ ամեն օր...» Մատթեոս 28:18-20

### 4- Ես ծառայում եմ օտար շրջանակներում

«Եվ եթե Հայր եք կանչում նրան...սպա ձեր պանդխտության ժամանակը վախճվ վարվեցեք:» Ա Պետրոս 1:17

«...որոնք երկրավոր բաներն են մտածում: Բայց մեր քաղաքականությունը երկնքումն է, որ այնտեղից սպասում ենք Փրկիչն՝ Տեր Հիսուս Քրիստոսին.» Փիլիպպեցիս 3:19-20

## Իմ Պարտականությունները

### 1. Ես պետք է օրինակելի լինեմ

«Ձեր վարքը հեթանոսների մեջ բարի պահեցեք, որ ինչ բանով որ ձեզ չարագործների պես բամբասում են, ձեր բարի գործերը տեսնելով փառավորեն Աստծուն:» Ա Պետրոս 2:12

### 2. Ես պետք է բաժնեկցեմ պատգամը

«Ուրեմն եթե մեկը Քրիստոսումն է՝ նոր ստեղծված է. հիները անցան...բայց այն ամենն Աստվածանից է. որ մեզ իրան հետ հաշտեցրեց Հիսուս Քրիստոսի ձեռովը. և մեզ հաշտության պաշտոնը տվավ: Որովհետև Աստված էր Քրիստոսումը որ աշխարհքը հաշտեցրեց իրան հետ, և նրանց հանցանքները չհամարեց նրանց և հաշտության խոսքը մեր միջումը դրավ:» Բ Կորն 5:17-19

«Արդ Քրիստոսի կողմից պատգամավորություն ենք անում, իբրև թե Աստված է հորդորում մեզանով. աղաչում ենք Քրիստոսի տեղ հաշտվեցեք Աստծո հետ: որովհետև Աստված նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արավ. որ մենք Աստծո արդարությունը լինենք նրանում: Եվ մենք գործակից լինելով նաև աղաչում ենք, որ դուք Աստծո շնորհքը գուր տեղը չնորսնեք:» Բ Կորնթացիս 5:20-6:1

### 3. Ես պետք է սեր ցույց տամ

- Օգտագործելով իմ կյանքը ուրիշներին օգնելու համար

«Այնպես էլ մենք խանդակաթ սեր ունենալով դեպի ձեզ, հաճեցանք ոչ թե միայն Աստծո ավետարանը տալ ձեզ, այլ մեր անձերն էլ, որովհետև մեր սիրելիներն եղաք:» Ա Թեսալոնիկեցիս 2:8

- Հարգելով յուրաքանչյուր անձի

«Եվ միշտ պատրաստ եղեք հեզությամբ և երկյուղածությամբ պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնի:» Ա Պետրոս 3:15-16

- Կամուրջներ կառուցելով

«Ամենին ամեն բան եղա, որ ինչնիցե մի քանիսին ապրեցնեմ: Այս անում եմ ավետարանի համար, որ նրան կցորդ լինեմ:» Ա Կորնթացիս 9:22բ-23

## Իմ Վարձը

«Ամեն ինչ որ էլ անեք, սրտանց արեք, ինչպես Տիրոջը, և ոչ թե մարդկանց. Գիտենալով որ Տերիցը կառնեք ժառանգության հատուցումը. վասնզի Տեր Քրիստոսին եք ծառայում:» Կորնու. 3:23-24

Հաջորդ Կիրակի:

ՄԵՆՔ ԱՍՏՕՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՆՔ

Հովիվ Սարո Խաչիկեան